ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան.

Ի պատասխան Ձեր 08.04.2019թ. հ.01/65Մ գրության՝ Արցախի փողոցի 4-րդ նրբանցքի հ.10 շենքի լիազոր Մարիետա Հովհաննիսյանի մայր՝ Կարինե Հովհաննիսյանին վերաբնակեցման ժամանակ մեկ սենյակի փոխարեն երկուսենյականոց բնակարան տրամադրելու հարցի կապակցությամբ, տեղեկացվում է.

Երևան քաղաքում առկա 4-րդ կարգի վթարային հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցման գործընթացն իրականացվում է ՀՀ կառավարության 05.02.2009թ. հ.172-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն: Վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ սեփականատերերին բնակարանի հատկացում է կատարվում նախկինում զբաղեցրած սենյակների թվին համապատասխան: Հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցման գործընթացն իրականացվում է վերը նշված որոշման և ամենամյա համայնքային գույքի օգտագործման տրամադրման և օտարման տարեկան ծրագրով սահմանված դրույթներին համապատասխան, որոնցով չի նախատեսում բնակարանային պայմանների բարելավում: Գործընթացը նպատակ է հետապնդում կանխելու անցանկալի հետևանքները և կարգավորել փլուզման վտանգի տակ գտնվող շենքերի բնակիչների շուտափույթ վերաբնակեցման գործընթացը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ